ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ
ՀԻՇԱՏԱԿԻՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

Մ. Աբեղյանի մահվան կապակցությամբ, որ տեղի ունեցավ 1944 թվին, Հայաստանի կառավարությունը հատուկ որոշում ընդունեց մեծ գիտնականի հիշատակը հավերժացնելու համար: Ի թիվս այլ միջոցառումների, այդ որոշման մեջ հանձնարարվեց Ինստիտուտիս (որը նույն այդ որոշմամբ ստացավ Մ. Աբեղյանի անունը) ստիպանաբար հրատարակության հանձնել նրա գիտական ժառանգությունը:

1944 թվից Ինստիտուտը լրջորեն զբաղված է կառավարության այդ որոշման իրականացման գործով: 1945 թ. լույս ընծայվեց հանգուցյալ գիտնականի «Հայոց հին գրականության պատմություն» աշխատության Ա. հատորը: 1946 թվին լույս տեսավ նույն գործի Բ հատորը:

Կազմակերպված է նաև հիշյալ հատորների ռուսերեն թարգմանության և հրատարակության գործը:

Աբեղյանի գիտական հարուստ ժառանգությունը ժողովրդին ավելի հասկանալի ու առավել մատչելի դարձնելու նպատակով Ինստիտուտը որոշեց հրատարակել նաև գիտնականի հիշատակին նվիրված հերկա ժողովածուն: Ժողովածվի Ա. բաժնում զետեղված են Աբեղյանի գիտական ժառանգության տարբեր բնագավառները (գրականություն, ֆոլկլոր, լեզու) բնութագրող և գնահատող հոդվածներ: Բ. բաժնում տեղ են գտել հեղինակի թեմատիկայի հետ առնչվող գրական-բանասիրական հետախուզումներ: Վերջապես, Գ. բաժնում տրված է Աբեղյանի աշխատությունների լիակատար բիբլիոգրաֆիան: Երեք բաժիններին նախորդում է Մ. Աբեղյանի կենսագրությունը:

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ